**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 ապրիլի 2014թ. թիվ 126-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՑԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 6 արձանագրային որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանում ծառայողական վկայականների տրամադրման կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանում ծառայողական անցագրերի տրամադրման կարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանում ծառայողական վկայականների և ծառայողական անցագրերի հաշվառման կարգը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանում տրամադրվող ծառայողական վկայականների նկարագիրը համաձայն թիվ 4 հավելվածի:

5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանում տրամադրվող ծառայողական անցագրերի նկարագիրը համաձայն թիվ 5 հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. ապրիլի 1
ք.Վանաձոր